ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

100-օրյա հաշվետվություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի հաշվետվությունը պաշտոնավարման 100 օրվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԵՎ ԱՀ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

- ✓ **Հաստատվել է 4 ամիս ժամկետով աջակցության ծրագիր՝ 2020 թվականին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված կամ Արցախի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքը կորցրած այն քաղաքացիների համար, որոնք գտնվում են ՀՀ-ում կամ ԱՀ-ում:**

  Աջակցությունը տրամադրվում է երեխաներին, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ 50,000, իսկ մյուս շահառուներին (կանայք, տղամարդիկ, այդ թվում՝ կենսաթոշակառուներ) 25,000 դրամի չափով:

- ✓ **Աջակցություն տրամադրման առաջարկ՝ 2020 թ. ռազմական գործողությունների հետևանքով տեղահանված որոշ խումբ քաղաքացիների (շուրջ 3,230 ընտանիք՝ 12,457 անձ):**

- ✓ **Աջակցություն տրամադրման առաջարկ՝ 2020 թ. ռազմական գործողությունների հետևանքով Արցախի Քաշաթաղի շրջանից տեղահանված շուրջ 950 ընտանիքի (3,600 անձ):**

  Ծրագրի շահառու կարող են դառնալ ՀՀ մարզային բնակավայրերում, Երևանում կամ Արցախի Հանրապետությունում 2022 թվականի հունվարի 1-ից հիփոթեքային վարկով բնակելի անշարժ գույք

ձեռք բերող կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկ ստացող շահառու քաղաքացիները:

- ✓ **Փոփոխություն՝ «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի, ինչպես նաև անհայտ կորածների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության միջոցառումը հաստատելու մասին» միջոցառման ընթացակարգում. անհայտ կորած քաղաքացիական անձանց ընտանիքներին ամսական 300,000 դրամ աջակցության (2020թ. դեկտեմբերից 2021թ. դեկտեմբերը ներառյալ) տրամադրում՝ նախկինում միանվագ տրամադրվող 1,000,000 դրամի փոխարեն:**

- ✓ **2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով վնասվածք կամ խեղում ստացած զինծառայողներին տրամադրվող ամենամսյա դրամական վճար ստանալու հնարավորության երկարաձգում՝ առավելագույնը 9 ամիս:**

- ✓ **Ադրբեջանի վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների (300,000 դրամ) և Արցախի Հանրապետությունում հաշվառված ու հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը 2020 թվականի սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների (250,000 դրամ) աջակցության ծրագրերում շահառուների ցուցակների ստացման ժամկետի երկարաձգում:**

- ✓ **Արցախցիներին սեփական կայուն եկամտով ապահովելու, վերջիններիս շրջանում ձեռներեցությամբ զբաղվելը խթանելու և կյանքի որակը բարձրացնելու նպատակով Արցախում կհիմնվի 1,000 սոցիալական բիզնես:**

  Նախաձեռնությանն արդեն իսկ միացել են Հայաստանի համահայկական հիմնադրամը, Armenia Tree Project կազմակերպությունը. պայմանավորվածություններ կան այլ կազմակերպությունների հետ ևս:

- ✓ Կորոնավիրուսային համավարակի և 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմից տուժած անձանց և խոցելի խմբերին աջակցություն տրամադրելու նպատակով՝ հուշագրերի ստորագրում մի շարք կազմակերպությունների՝ Պարենի համաշխարհային ծրագրի, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, «Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության» (ACTED) հայաստանյան մասնաճյուղի, «Վորլդ Վիժն Ինթերնեյշընլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, Ամունդի-ԱԿԲԱ Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ-ի, «Ռելք» հիմնադրամի հետ:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՆՊԱՍՏՆԵՐ

- ✓ **2022 թվականի հունվարի 1-ից նվազագույն կենսաթոշակի չափի բարձրացում. 28,600 դրամ՝ 26,500 դրամի փոխարեն:**

- ✓ **2022 թվականի հունվարի 1-ից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների հաշմանդամության զինվորական կենսաթոշակի, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափերի բարձրացում՝**
  - **1-ին խմբի դեպքում՝ 43,000 դրամ (ներկայումս սահմանված 40,000 դրամի փոխարեն),**
  - **2-րդ խմբի դեպքում՝ 33,000 դրամ (30,000 դրամի փոխարեն),**
  - **3-րդ խմբի դեպքում՝ 30,000 դրամ (27,000 դրամի փոխարեն):**

- ✓ **2022 թվականի հունվարի 1-ից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի մահացած (զոհված) զինծառայողի ընտանիքի անդամի կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի չափի բարձրացում.30,000 դրամ՝ սահմանված 27,000 դրամի փոխարեն:**

- ✓ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների չափի բարձրացում՝ 28,600 դրամ՝ 26,500 դրամի փոխարեն:

- ✓ 2022 թվականի հունվարի 1-ից հաշմանդամություն ունեցող երեխաների համար հաշմանդամության նպաստի չափի բարձրացում.37,000 դրամ՝ 26,500 դրամի փոխարեն:

- ✓ Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքներում կենսաթոշակի և ծերության, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների վճարում՝ բացառապես անկանխիկ եղանակով: 2022 թվականից հունվարի 1-ից կենսաթոշակների և կենսաթոշակի վճարման կարգով տրամադրվող նպաստների անկանխիկ վճարման գործընթացի մեկնարկ ՀՀ բոլոր քաղաքներում:

- ✓ Ընտանեկան և սոցիալական նպաստի, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրում՝ այժմ նաև անկանխիկ եղանակով:

- ✓ ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թ. հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման իրավունք ունեցող քաղաքացիներին՝ նաև անկանխիկ եղանակով գումարն ստանալու հնարավորություն:

- ✓ Միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ՀՀ քաղաքացիների համար միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում վճարման ենթակա՝ կենսաթոշակային վճարի և սոցիալական վճարների կատարմանն առնչվող հարաբերությունների հստակեցում:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով վնասվածք (վիրավորում) ստացած և հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված նախկին զինծառայողներին կամ նրանց հավասարեցված անձանց աշխատանքի ընդունման դեպքում գործատուին աջակցության տրամադրման նպատակով զբաղվածության նոր ծրագրի մշակում: Համաձայն որի՝ աշխատանքի տեղավորած յուրաքանչյուր անձի համար գործատուին տրամադրվում է՝
    - աջակցություն առավելագույնը 100,000 դրամի չափով՝ աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկի համար՝ եռամսյակային կտրվածքով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով,
    - միանվագ փոխհատուցում՝ ոչ ավելի, քան 500,000 դրամի չափով՝ աշխատատեղի հարմարեցման անհրաժեշտության դեպքում:

- ✓ 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմին մասնակից 100 զինծառայողի մասնագիտական ուսուցման հնարավորություն և աշխատանքով ապահովում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Սոֆթ կոնստրակտ» ՓԲԸ միջև համագործակցության հուշագրի շրջանակում:

- ✓ **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Ֆրանսիա Հայաստան առևտրաարդյունաբերական պալատի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակում՝ վերապատրաստման դասընթացներից հետո նախատեսվում է աշխատանքով ապահովում շուրջ 400 քաղաքացու:**

Հուշագրի շրջանակում՝ «Քարֆուր Արմենիա» ընկերությունը նախատեսում է ստեղծել 180 աշխատատեղ: Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններում հաշվառված գործազուրկ քաղաքացիների ուղղորդում ընկերություն, ապա վերապատրաստման դասընթացներ և աշխատանքով ապահովում:

- ✓ **ԱՍՀՆ և ԳՏՏԿ միջև հուշագրի շրջանակում նախատեսվում է համատեղ ծրագրերի իրականացում՝ ուղղված 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի առնվազն 100 մասնակցի և նրանց ընտանիքների մասնագիտական ուսուցմանն ու վերապատրաստմանն, աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը և կայուն զբաղվածության ապահովմանը:**

- ✓ **Համագործակցության հուշագիր՝ ԱՍՀՆ և ԵՊՀ միջև. ուսանողների մասնագիտական պրակտիկայի, հետազոտական աշխատանքների իրականացման, ուսանողների կարիերայի կառավարման և հոգեսոցիալական ծրագրերի իրականացման շուրջ:**

- ✓ **Լայնածավալ փոփոխություններ սոցփաթեթի հատկացման կարգում:**

Հնարավորություն սոցփաթեթի շահառուներին՝ գումարն ուղղել նաև հետևյալ ուղղություններով՝

- *Ստոմատոլոգիական ծառայություններ,*
- *Նախադպրոցական ուսումնական հաստատություններում վճարի մարում,*
- *Մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու վճարի մարում,*
- *Պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկերի մարում,*

- *Գույքի ձեռքբերման կամ կառուցապատման նպատակով տրամադրված հիփոթեքային վարկերի մարում:*

Սոցփաթեթի ծառայություններից օգտվելու համար նույնականացման քարտ ներկայացնելու պարտադիր պահանջի հանում:

Շահառուների համար երաշխիքի սահմանում. սոցփաթեթի մեկ շահառու կազմակերպությունից մյուսը մեկ ամսվա ընթացքում աշխատանքի անցնելիս՝ սոցփաթեթից օգտվելու իրավունքի պահպանում:

Սոցփաթեթի շահառուների ընտանիքի անմիջական անդամների շրջանակի վերանայում, համաձայն որի՝ ընտանիքի անմիջական անդամ է համարվում նաև շահառուի ծնողը, որդեգրողը, որդեգրվածը, խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, տատը, պապը, թոռը, համատեղ բնակվող եղբայրը և քույրը:

Սոցփաթեթի հատկացման կարգի առավել հստակեցում.իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծում:

- ✓ **Կորոնավիրուսային հիվանդության տարածման հետևանքով ստեղծված իրավիճակում աշխատանքային հարաբերությունների պատշաճ կենսագործունեությունն ու իրականացումն ապահովելու նպատակով՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում:**

Մասնավորապես, նախագծերով սահմանվում են կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը աշխատողների կողմից չներկայացվելու դեպքում աշխատողին աշխատանքի չթույլատրելու, գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի չթույլատրելու և լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հատուկ հիմքերը:

- ✓ **ԵԱՏՄ «Աշխատանք առանց սահմանների» աշխատանքի որոնման հարթակի գործարկում:**

Որոնողական համակարգի միջոցով թափուր աշխատատեղերի և աշխատանք փնտրողների մասին տեղեկատվության հասանելիության ապահովում միության անդամ պետություններում (Հայաստանի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուսի Հանրապետություն, Ղազախստանի Հանրապետություն,Ղրղզստանի Հանրապետություն):

- ✓ **Համագործակցություն ESCO-ի հետ՝ զբաղմունքների, մասնագիտությունների դասակարգիչներն ու որակավորումների շրջանակները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու նպատակով: Նախատեսվում է տվյալների վերլուծության back-end և job-search front-end համակարգերի ստեղծում:**

- ✓ **Համագործակցության հուշագիր՝ «Նորք» տեխնոլոգիաների կենտրոն հիմնադրամի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի միջև. հուշագրի շրջանակում նախատեսվում է հետազոտական նախագծերի իրականացում, գիտաժողովների ու դասընթացների կազմակերպում, ինչպես նաև առանձին նախագծերի ու միջոցառումների իրականացման նպատակով՝ աշխատանքային խմբերի ստեղծում:**

- ✓ **Աշխատանքի տոնավաճառ՝ 50-ից ավելի գործատուների և աշխատանք փնտրող շուրջ 4,000 քաղաքացու մասնակցությամբ:**

  Հնարավորություն՝ միևնույն հարթակում համախմբել գործատուներին, աշխատանք փնտրող անձանց, ինչպես նաև համալսարաններին ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին:

- ✓ **Լրացումներ՝ աշխատանք փնտրող անձանց՝ Միասնական սոցիալական ծառայության պաշտոնական կայքէջում առցանց եղանակով հաշվառվելու հնարավորության տրամադրման հարցում:**

- ✓ **Պետական մարմինների մենեջմենթի և մասնավոր հատվածի հետ ԷՆ գործընկերների հետ համատեղ 29 խորքային հարցազրույցների իրականացում՝ ներառյալ երկրորդային տվյալների ուսումնասիրություն, որոնք ամբողջական վերլուծության արդյունքներով**

կտրամադրվի ԿԳՄՍՆ-ին առանձին մասնագիտություններով տեղերի հատկացման նպատակով:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

- ✓ **2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վիրավորում ստացած անձանց թանկարժեք ֆունկցիոնալ պրոթեզների տրամադրման գործընթացի ամբողջացում: Արդյունքում պրոթեզավորվել է 119 անձ. պրոթեզավորումը կազմակերպվել է նախարարության, Համահայկական հիմնադրամի ու «Իթերնալ Նեյշն Ֆաունդեյշն Արմենիա» բարեգործական հիմնադրամի և պրոթեզավորում իրականացնող կազմակերպությունների միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակում:**

- ✓ **Նախատեսվում է 2020 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում վնասվածք ստացած և ծանր հենաշարժողական խնդիրներ ունեցող զինծառայողների վերականգնողական ծառայությունների տրամադրում «էկզոսկելետոն» աջակցող միջոցի օգնությամբ:**

  «Էկզոսկելետոնը» ծանր հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժումն ապահովելու նորագույն աջակցող միջոցներից է, որը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց ֆունկցիոնալության վերականգնմանը, հնարավորություն կտա ինքնուրույն քայլել:

- ✓ **Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված նորարարական բազմաֆունկցիոնալ տեխնոլոգիական լուծումների վերաբերյալ վերապատրաստումներ ԱՄԷ հետ համատեղ:**

Վերապատրաստմանը մասնակցել է խնամքի հաստատությունների, հանրակրթական դպրոցների հատուկ և ներառական կրթության, հասարակական հատվածի վերականգնողական և աբիլիտացիայի կենտրոններում աշխատող ավելի քան 70 մասնագետ:

- ✓ **«Անձի ֆունկցիոնալությունը գնահատող մասնագետների վերապատրաստման» դասընթացի իրականացում բժշկական և հարբժշկական մասնագետների ներգրավմամբ՝ Եվրոպական միության SOCIEUX+ բաղադրիչի-ի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ:**

- ✓ **Աջակցող միջոցների տրամադրման կարգի բարելավում. աջակցող միջոցների պետական հավաստագրերի գնագոյացման նոր մեխանիզմի մշակում: Հնարավորություն ընձեռում՝ բարձրացնելու աջակցող միջոցների գին-որակ հարաբերակցությունը: Աջակցող միջոցների վերանորոգման մեխանիզմի վերանայում:**

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ **2022 թ. հունվարի 1-ից հետո ծնված երրորդ և հաջորդ երեխաների դեպքում նախատեսվում է ամսական 50,000 դրամ աջակցության տրամադրում:**

- ✓ **Բարեփոխումներ՝ «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թթ. ծրագրերում»:**

- ✓ **Երեխայի ծննդյան աջակցության ծրագրի շրջանակում ընտանիքում միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում, այսուհետ աջակցության չափը հաշվարկվում է՝ ըստ ծնված երեխաների թվի:**

- ✓ **Իրականացված փոփոխությունների շրջանակում սահմանվել է անցումային դրույթ, որով կարգավորվում են այն դեպքերը, երբ բանկերի կողմից շահառուների վերաբերյալ անհրաժեշտ տվյալներն ուղարկվել են սահմանված ժամկետներից ուշ, որի արդյունքում շահառուները չեն ընդգրկվել կանխավճարի ապահովագրության ծրագրում՝ լիովին բավարարելով ծրագրի հիմնական պայմաններին:**

- ✓ **Սահմանված մյուս անցումային դրույթով կարգավորվում են այն դեպքերը, երբ երեխայի ծննդյան աջակցության ծրագրի շրջանակում շահառուները չեն կարողացել դիմել մինչև երեխայի 1 տարին լրանալը: Անցումային դրույթը վերաբերվում է միայն 2020 թ. հուլիս ամսին ծնված երեխաներին, քանի որ 12 ամիս մարումներ ունենալու վերաբերյալ պայմանի փոփոխությունը հաստատվել է 2021 թվականի հուլիսի 15-ին:**

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- ✓ **Միասնական սոցիալական ծառայության Մեղրիի, Ապարանի, Մարտունու նորոգված տարածքային կենտրոնների շահագործում.մեկ պատուհանի սկզբունքով արագ և հասցեական սոցիալական ծառայություններ՝ քաղաքացիներին:**

- ✓ **ՀՀ մանկատան շրջանավարտների համար իրականացվող բնակարանի գնման վկայագրերի տրամադրման կարգի վերանայում: Ծրագրից օգտվելու հնարավորություն՝ նաև 18 տարին լրացած առնվազն 7 տարի մանկատանը խնամք և դաստիարակություն ստացած մանկատան սաներին և 2021 թվականի մանկատան շրջանավարտներին: Դիմելու ժամկետների վերանայում, գործող ընթացակարգերի հստակեցում: Արդյունքում՝ ԲԳՎ ստանալու իրավունքի ձեռքբերման հնարավորություն՝ ևս շուրջ 90 շահառուի:**

- ✓ **Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Շիրակի և Լոռու մարզերում բնակվող ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված շուրջ 300 շահառու ընտանիքի աջակցություն տրամադրում՝ «Հայաստանում սոցիալական ներառման և ինքնաբավ կենսապահովման միջոցառումների խթանման» ծրագրի շրջանակում:**

Ըստ այդմ՝ կապահովվի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված շուրջ 300 ընտանիքի՝ սեփական զբաղվածության ապահովման, բիզնես նախաձեռնությունների իրականացման նպատակով:

Աջակցություն տրամադրում՝ ևս շուրջ 1,800 շահառուի՝ սոցիալական, առողջապահական, կրթական ծառայությունների հասանելիության ապահովման համար:

- ✓ **Սոցիալապես անապահով ընտանիքների համար, բնական գազի և էլեկտրական էներգիայի օրինակով, խմելու ջրի համար ևս հնարավորինս նվազ սակագներ սահմանելու հնարավորության ստեղծում:**

- ✓ **Անապահովության (սոցիալական) գնահատման համակարգում առկա խնդիրների բացահայտման, համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման, նոր համակարգի ներդրման նպատակով հանձնաժողովի ստեղծում:**

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

- ✓ **«ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի կազմում: Օրենսդրական բարեփոխման նախաձեռնությամբ երեխայի իրավունքների պաշտպանության կառուցակարգերի հզորացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում՝ բոլոր գործընթացներում ապահովելու երեխայի լավագույն շահը:**

- ✓ **2021թ. «Շիրակի մարզի երեխայի և աջակցության կենտրոն» և «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ների գործունեության մեկնարկ: Երկու կենտրոններում ծառայություն ստանալու հնարավորություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներ համար (ցերեկային և շուրջօրյա կարճաժամկետ բաղադրիչ):**

- ✓ **Համագործակցության հուշագիր՝ ԿԱՌԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի հետ՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների շրջանում քաղաքացիական կրթության զարգացման և ոչ ֆորմալ կրթական գործիքների ներդրման խթանման նպատակով:**

- ✓ **Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների իրավունքների լիարժեք իրացման նպատակով անհրաժեշտ պայմանների ստեղծում՝ այդ թվում տարբեր շահեկից կառույցների հետ**

համագործակցության արդյունքում նյութատեխնիկական բազայի, շենքային պայմանների, մասնագիտական կազմի կարողությունների և հմտությունների բարելավում:

- ✓ Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների գործունեության գնահատման և վերաբրենդավորման նպատակով աշխատանքների իրականացում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին առավել կարիքահեն ծառայություններ տրամադրելու նպատակով:

- ✓ Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության լայնածավալ բարեփոխումների իրականացման գործընթացի մեկնարկ:

ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

- ✓ **«Տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման եվ համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը» և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը հաստատելու մասին որոշմամբ տարեցների հիմնահարցերով առաջին նիստի անցկացում. ՀՀ ողջ տարածքով 1000 տարեցի կարիքի գնահատման գործընթացի մեկնարկ, որը կստեղծի ամբողջական պատկեր հանրապետությունում բնակվող տարեց անձանց խնամքի, զբաղվածության և այլ ոլորտներում:**

- ✓ **Ակնաշեն և Մրգաստան համայնքներում մեկական փոքր տների վերանորոգման համար նախագծանախահաշվային աշխատանքների իրականացման համար գումարի տրամադրում: Նախատեսվում է Գեղակերտում գտնվող փոքր տան ամբողջական վերանորոգման համար գումարի հատկացում:**

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՈԼՈՐՏ

- ✓ **«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և կանխարգելման» արշավի մեկնարկ: Արշավի ընթացքում իրազեկման և կանխարգելման միջոցառումների իրականացում, վերապատրաստումներ՝ առաջնային օղակի աշխատակիցների համար՝ ԱՍՀՆ ենթակայության ներքո գտնվող երեխայի խնամքի հաստատություններում:**

- ✓ **«Ընտանիքում բռնության դեմ պայքարի և կանխարգելման շրջանակում» վերապատրաստման դասընթացներ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների բոլոր աշխակիցների, նախարարության ենթակայությամբ գտնվող բոլոր ՊՈԱԿ-ների հոգեբանների և սոցիալական աշխատակիցների, 114 և 911 թեժ գծերի աշխատակիցների, ինչպես նաև մարզային ՋԼՄ ներկայացուցիչների համար:**

- ✓ **Միջազգային և հասարակական գործընկերների աջակցությամբ ծրագրերի իրականացում խոցելի խմբին պատկանող կանանց կարողությունների զարգացման և հզորացման ուղղությամբ:**

- ✓ **Հուշագիր՝ ԱՍՀՆ և «Վորլդ Վիժն Հայաստան» հկ-ի միջև՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում ջանքերն ու ռեսուրսները համատեղման, օրենսդրության կատարելագործման ու ներդաշնակեցման, նոր ինստիտուցիոնալ մեխանիզմների ներդրման ու հզորացման նպատակով:**

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում միջազգային գործընկերների հետ ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, իրականացվել են համալիր աշխատանքներ, որոնց արդյունքում մշակվում են հետևյալ ռազմավարությունները՝

- ✓ **Աշխատանքի և սոցիալական պաշտպանության համակարգի զարգացման ռազմավարություն.** *նպատակը՝ նախարարության և ոլորտի զարգացման ընդհանուր տեսլականի ձևավորում, նախատեսվող բոլոր բարեփոխումների ժամանակացույցի հստակեցում և դրանց ներդաշնակեցում:*

- ✓ **Ժողովրդագրության ռազմավարություն.** *նպատակը՝ ժողովրդագրական իրավիճակի բարելավում, բնակչության ծերացմամբ պայմանավորված հնարավոր ֆիսկալ ճգնաժամերի լուծում, ծնելիության և միգրացիոն քաղաքականությունը բարեփոխելու վերաբերյալ հստակ ծրագրային առաջարկների ներկայացում:*

- ✓ **Զբաղվածության խթանման ռազմավարություն.** *նպատակը՝ զբաղվածության քաղաքականության արմատական վերանայում, կառուցվածքային նոր բարեփոխումների և ծրագրերի մշակման միջոցով աղքատությունից զբաղվածության անցում, կանանց ու երիտասարդների տնտեսական ակտիվացում:*

- ✓ **Սոցիալական բնակարանաշինության ռազմավարություն.** *նպատակը՝ մատչելի բնակարանաշինության սկզբունքների հստակեցում, ֆինանսավորման մեխանիզմների մշակում, թիրախ խմբերի սահմանումն ու գործընթացի կառավարման կառույցի ձևավորում:*

  Համագործակցության հուշագրի ստորագրում՝ ԱՍՀՆ և ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ընկերության միջև. նախատեսվում է ուսումնասիրության իրականացում, որի հիման վրա կմշակվի Հայաստանում սոցիալական բնակարանային համակարգի ներդրման ռազմավարությունն ու հնգամյա միջոցառումների ծրագիրը:

- ✓ **Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի և Միասնական սոցիալական ծառայության բարելավման ռազմավարություն.** *նպատակը՝ սոցիալական ոլորտում ծառայությունների մատուցման պրակտիկայի բարելավում՝ սկսած դեպքի բացահայտումից մինչև դրա ամբողջական սպասարկում:*

  Մշակվող բոլոր ռազմավարություններն ունենալու են հստակ ծրագրային առաջարկներ՝ արդյունքի ու ֆինանսական շրջանակով, մոնիթորինգի ու գնահատման հստակ համակարգերով, ինչի արդյունքում հնարավոր կլինի ապահովել դրանց ազդեցության չափելիությունը: Առաջարկվող ծրագրերը հնարավոր կլինի ներառել 2023 թ. ՄԺԾԾ-ում և բյուջետային հայտում: Նախատեսվող բոլոր բարեփոխումները լինելու են փոխկապակցված և առանցքում ունենալու են երեք նպատակ՝ ծնելիության խթանում, աղքատության հաղթահարում, աշխատանքի խրախուսում: